ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 552-Ա **15 սեպտեմբերի 2026 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի թիվ 46 որոշման հավելված N 2-ի 3-րդ կետով և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզպետի 2026 թվականի հունվարի 4-ի N 73-Ա որոշման հավելվածի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 9. 1. 1 կետը

որոշում եմ՝

1. Գեղարքունիքի մարզում 2026 թվականի սեպտեմբերի 16-ին իմ ղեկավարությամբ անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով:
2. Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության գնդապետ Գարեգին Վրեժի Հակոբյանին:
3. Հաստատել շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի խմբերի կազմերը.

1) շտաբային ուսումնավարժության նախապատրաստման և վերլուծության խումբ՝

Արսեն Գառնիկի Պետրոսյան- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փրկարարական ծառայության փոխգնդապետ՝ խմբի ղեկավար.

Լևոն Գևորգի Պիպոյան- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ, փրկարարական ծառայության մայոր.

Վահրամ Սամվելի Գորոյան- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ, փրկարարական ծառայության մայոր.

2) գործնական միջոցառումների անցկացման խումբ՝

Էվելինա Ռուբենի Խաչատրյան- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ -խմբի ղեկավար

Արտակ Հայկի Խաչատրյան- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ, փրկարարական ծառայության մայոր.

Գարիկ Մամիկոնի Գալոյան- Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ, փրկարարական ծառայության լեյտենանտ:

4. Հաստատել՝

1) շտաբային ուսումնավարժության անցկացման օրացուցային պլանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) շտաբային ուսումնավարժության մտահաղացման սխեման՝ համաձայն N 2 հավելվածի.

3) շտաբային ուսումնավարժության մտահաղացման բացատրագիրը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) շտաբային ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 4 հավելվածի

5) շտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանը համաձայն N 5 հավելվածի.

5. Շտաբային ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ղեկավար կազմին.

2) Գեղարքունիքի մարզի տարահանման հանձնաժողովին.

3) Գեղարքունիքի մարզի Արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին

4) Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը.

5) Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար կազմին.

6. Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Գարեգին Հակոբյանին՝

1) ապահովել ուսումնավարժությունը նախապատրաստելու և անցկացնելու փաստաթղթերի մշակումը և ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

7. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել ենթակա պաշտոնատար անձանց խնդիրներն ու պարտականությունները և կատարել նրանց հրահանգավորում.

2) ուսումնավարժությանը նախապատրաստվելու հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

15.09.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ
2026թ.

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի

2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 5526 որոշման

ՕՐԱՑՈՒՅԱՑԻՆ ՊԼԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետները	Պատասխանատու կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
Փաստաթղթերի մշակում				
1	Ելակետային տվյալների որոշում՝ անցկացման ժամկետ, վայր, մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	մինչև 19.08	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբի պետ	
2	Կազմակերպման և անցկացման վերաբերյալ ուսումնվարժության ղեկավարի որոշման (հրամանի) նախագծի մշակում	մինչև 19.08	Ղեկավարման շտաբի պետ	
3	Մտահղացման մշակում	մինչև 20.08	Ղեկավարման շտաբի պետ	
4	Մտահղացման բացատրագրի մշակում	մինչև 20.08	Ղեկավարման շտաբի պետ	
5	ՇՈՒ անցկացման պլանի մշակում	մինչև 21.08	Ղեկավարման շտաբի պետ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2026-09-15 17:57:58 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 552-Ա որոշման

ՍԽԵՄԱ

«ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ



Պայմանական նշաններ	
	Հրդեհի օջախ
	Ծխապատ գոտիով արտաքին հրդեհ
	Հրդեհի տարածման ուղղությունը
	Հրդեհաշիջման շտաբի տեղակայման վայր
ՀԱԿ	ՀԱԿ-հսկիչ անցագրային
	Փլուզված կամուրջ
	Հրշեջ ավտոմոբիլով ջուր վերցնելու համար նախատեսված ափամերձ գոտի
	Ճանապարհի ջրածածկված հատված
	Հրդեհաշիջման գործողությունների վճռական ուղղությունը

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2026-09-15 17:58:44 GMT+4
Հավաստված է EKENG-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 16-ի N 552-16 որոշման

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ - «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում»

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1. Կատարելագործել մասնակիցների տեսական գիտելիքները՝ Անտառային հրդեհների դեպքում հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2. «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Գեղարքունիքի մարզի գործելու պլան»-ի իրատեսության ստուգում:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողովը, մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը, Գավառ համայնքի և Նորատուս բնակավայրի ղեկավար կազմը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գեղարքունիքի մարզում անտառային տարածքները կազմում են մոտ 16000 հա որից մոտ 60% փշատերև: Մարզի տարածքում երաշտը հաճախակի կրկնվող երևույթ է՝ ինչը դյուրավառ է դարձնում տարածքները: Վերջին օրերի բարձր ջերմաշտիճանը էլ ավելի է բարձրացրել հանգստացողների թիվը, անտառային տարածքներում: Հրդեհի պատճառ կարող է դառնալ հանգստացողների վառած խարույկները, ինքնայրումը և կայծակները:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 2026թ. սեպտեմբերի 16-ին ժամը 08:00-17:00

Ուսումնավարժությունը անցկացվում է 2 փուլով

1-ին փուլ՝ Հրդեհի տեղամասերի հետախուզության կազմակերպում:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 16.08.2026թ. ժամը 08:00-12:00

ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Վերջին 1,5 ամսվա ընթացքում մարզում տիրել է առանց տեղումների և առավելապես բարձր ջերմաստիճանով եղանակ, հաճախակի ուղեկցվող տաք քամիներով:

Առավոտյան ժամը 08^{00} ահազանգ է ստացվում ՀՀ Գեղարքունիքի մարզի ՕԿԿ, որ հրդեհ է բռնկվել Նորատուս բնակավայրի հարակից անտառային տարածքում և 7-9 մ/վ քամու ազդեցությամբ արագ տարածվում է Գավառ համայնքի հարակից անտառային տարածքում: Ըստ նախնական տվյալների հրդեհը կազմում է մոտ 4 հա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ազդարարման, հավաքի և խնդրադրման իրականացում:
2. Հրդեհի տեղամասերում հետախուզության կազմակերպում:
3. Հետախուզական տվյալների վերլուծում, համապատասխան ուժերի ներգրավում

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.09.2026թ. ժամը 08:00–ին ահազանգ է ստացվում ՀՀ Գեղարքունիքի մարզի ՕԿԿ, որ հրդեհ է բռնկվել Նորատուս բնակավայրի և Գավառ համայնքի անտառային տարածքներում: ՕԿԿ հրահանգիչը ազդարարում է Գավառի ՀՓՋ-ին, տեղեկացնում է մարզային փրկարարական վարչության պետին:

ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ պետի հրահանգով իրականացվում է ՄՓՎ և ստորաբաժանումների անձնակազմի ազդարարում և հավաք «Հայտարարված է հավաք» ազդանշանով:

Կազմակերպվում է Գավառի ՀՓՋ 2 մարտական հաշվարկների անհապաղ դեպքի վայր մեկնումը և Գավառ ու Նորատուս համայնքների և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետախուզական խմբերի հետ հետախուզության և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը:

Հետախուզության արդյունքում որոշվում են.

- հրդեհի տարածքը, տարածման ուղղությունները և արագությունը
- տարածման ուղղություններով այրվող նյութերի քանակը, սպառնալիքը բնակավայրերին
- ճանապարհների առկայությունը, վիճակը
- մոտակա ջրաղբյուրների առկայությունը
- աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները:

Հետախուզական խմբերը տվյալները հաղորդում են ՄՓՎ, որտեղ դրանք վերլուծվում և ներկայացվում են ԱԻ հանձնաժողովին: Ստեղծվում է հրդեհաշիջման շտաբ, որտեղ ընդգրկվում են ներկայացուցիչներ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, Գավառ բնակավայրից: Կատարվում է հաշվարկ ու ընդունվում է որոշում ներգրավվող ուժերի և միջոցների վերաբերյալ:

Ժամը 11:30-12:00 մասնակիցները ներկայացնում են իրենց իրականացրած գործողությունները, կատարվում է ուսումնավարժության 1-ին փուլի ամփոփում:

2-րդ փուլ՝ Հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 16.09.2026թ. ժամը 12:00-17:00

ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Հրդեհը ընդգրկել է մոտ 10 հա տարածք և 5-6 մ/վ քամու ազդեցությամբ արագ տարածվում է: Հրդեհը և առաջացած ծուխը սպառնում է Նորատուս բնակավայրին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Հրդեհաշիջման աշխատանքների իրականացում:
2. Նորատուս բնակավայրի ծխապատվող տարածքներից բնակչության տարահանման կազմակերպում:
3.Հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավվածների նյութատեխնիկական միջոցներով, սննդով և հանգստի պայմաններով ապահովման կազմակերպում:

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գավառի ՀՓՋ ուժերով կազմակերպվում է հրդեհաշիջման նախնական աշխատանքները, այնուհետ նրանց են միանում ծառայողներ Մարտունու, Ճամբարակի, Վարդենիսի և Սևանի ՀՓՋ-ներից: Հրդեհի ճակատը բաժանվում է տեղամասերի, նշանակվում են պատասխանատուներ: Գեղարքունիքի ՄՓՎ և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ ստեղծվում է խումբ նոր ջրաղբյուրներ հայտնաբերելու և Սևանա լճից հրդեհաշիջման համար ջուր վերցնելու նպատակով կառամատույցների կառուցման համար: Հաշվի առնելով հրդեհի տարածման ուղղություններն, արագությունը և տեղանքի ռելիեֆը կատարվում է հակահրդեհային անջրպետի ստեղծման տարածքի ընտրություն և դրա համար անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկ: Գեղարքունիքի մարզի հիդրոօդերևութաբանական ծառայությունը պարբերաբար ներկայացնում է

տվյալներ եղանակային պայմանների և սպասվող փոփոխությունների վերաբերյալ: Հրդեհի մարումից հետո կազմակերպվում են դիտակետերի ծավալման աշխատանքներ՝ նոր բռնկումների նկատմամբ հսկողության սահմանման համար:

Կազմակերպվում է անտառում տեղադրված մեղվապահական տնտեսությունների և Նորատուս բնակավայրի ծխապատման վտանգի գոտում հայտնված բնակչության կարճաժամկետ տարահանում և տարահանման համար անհրաժեշտ ուժերի, տեխնիկաների և նյութական միջոցների հաշվարկ:

Կազմակերպվում է ներգրավված ուժերի և տեխնիկաների համար անհրաժեշտ սնունդի, հանգստի պայմանների, վառելիքաքսուկային նյութերի և նյութատեխնիկական միջոցների ապահովման հաշվարկները և ներկայացնում են այդ աշխատանքների կազմակերպման կարգը:

Ժամը 16:00-17:00 մասնակիցները ներկայացնում են իրենց իրականացրած գործողությունները, կատարվում է ուսումնավարժության ամփոփում:

Ժամը 17:00 հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2026-09-15 17:59:37 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 15-ի N552-Ա որոշման

ՊԼԱՆ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ - «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում»
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1. Կատարելագործել մասնակիցների տեսական գիտելիքները՝ Անտառային հրդեհների դեպքում հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2. «Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում Գեղարքունիքի մարզի գործելու պլան»-ի իրատեսության ստուգում:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողովը, մարզի բնակչության տարահանման հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը, Գավառ համայնքի և Նորատուս բնակավայրի ղեկավար կազմը:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ՝ 2026թ. սեպտեմբերի 16-ին ժամը 8:00-17:00

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ

ՈՒսումնավարժությունը անցկացվելու է 2 փուլով:

ԺԱՄԸ	ՈՒսումնական հարցեր	Ստեղծվող իրավիճակը	Ուսուցանվողների գործողությունները	ՇՈՒ ղեկավարի գործողությունները
1.	2.	3.	4.	5.
1-ին փուլ՝ Հրդեհի տեղամասերի հետախուզության կազմակերպում: ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 16.09.2022թ. ժամը 8:00–12:00				
8:00-10:00	Ազդարարման, հավաքի և խնդրադրման իրականացում:	Վերջին 1,5 ամսվա ընթացքում մարզում տիրել է առանց տեղումների և առավելապես բարձր ջերմաստիճանով եղանակ, հաճախակի ուղեկցվող տաք քամիներով: Առավոտյան ժամը 08^{00} ահազանգ է ստացվում ՀՀ Գեղարքունիքի մարզի ՕԿԿ, որ հրդեհ է բռնկվել Նորատուս բնակավայրի հարակից անտառային տարածքում և 7-9 մ/վ քամու ազդեցությամբ արագ տարածվում է Գավառ համայնքի հարակից անտառային տարածքում: Ըստ նախնական տվյալների հրդեհը կազմում է մոտ 4 հա:	16.09.2026թ. ժամը 8:00–ին ահազանգ է ստացվում ՀՀ Գեղարքունիքի մարզի ՕԿԿ, որ հրդեհ է բռնկվել Նորատուս բնակավայրի և Գավառ խոշորացված համայնքի անտառային տարածքներում: ՕԿԿ հրահանգիչը ազդարարում է Գավառի ՀՓՋ-ին, տեղեկացնում է մարզային փրկարարական վարչության պետին: ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի ՄՓՎ պետի հրահանգով իրականացվում է ՄՓՎ և ստորաբաժանումների անձնակազմի ազդարարում և հավաք «Հայտարարված է հավաք» ազդանշանով:	Տալիս է հրահանգ ազդարարում և հավաք իրականացնելու վերաբերյալ: Հրավիրում է խորհրդակցություն և տեղեկացնում ստեղծված իրավիճակի մասին: Ընդունում է որոշում հրդեհաշիջման շտաբ ստեղծելու մասին:
8:15-11:00	Հրդեհի տեղամասերում հետախուզության կազմակերպում:	Իրավիճակը նույնն է:	Կազմակերպվում է Գավառի ՀՓՋ 2 մարտական հաշվարկների անհապաղ դեպքի վայր մեկնումը և Գավառ ու Նորատուս համայնքների և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետախուզական խմբերի հետ հետախուզության և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը: Հետախուզության արդյունքում որոշվում են. - հրդեհի տարածքը, տարածման ուղղությունները և արագությունը	Տալիս է կարգադրություն հետախուզության կազմակերպման մասին:

			- տարածման ուղղություններով այրվող նյութերի քանակը, սպառնալիքը բնակավայրերին - ճանապարհների առկայությունը, վիճակը - մոտակա ջրաղբյուրների առկայությունը - աշխատանքների կատարման եղանակները և անվտանգությունն ապահովող միջոցները:	
10:30-10:20	Տրվում են միջանկյալներ 1,2,3	Իրավիճակը ըստ 1,2,3 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների	
10:00-11:30	Հետախուզական տվյալների վերլուծում, համապատասխան ուժերի ներգրավում	Հրդեհը ընդգրկել է մոտ 4 հա տարածք և շարունակվում է տարածվել	Հետախուզական խմբերը տվյալները հաղորդում են ՄՓՎ, որտեղ դրանք վերլուծվում և ներկայացվում են ԱԻ հանձնաժողովին: Ստեղծվում է հրդեհաշիջման շտաբ, որտեղ ընդգրկվում են ներկայացուցիչներ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, Գավառ բնակավայրից: Կատարվում է հաշվարկ ու ընդունվում է որոշում ներգրավվող ուժերի և միջոցների վերաբերյալ:	Ընդունում է որոշում անհրաժեշտ ուժերի և միջոցների ներգրավման վերաբերյալ:
11:30-12:00	Ուսումնավարժության 1-ին փուլի ամփոփում		ՈՒսումնավարժության մասնակիցները զեկուցում են իրականացված միջոցառումների մասին:	Լսում է ներկայացվող զեկույցները տալիս գնա-հատականներ:
2-րդ փուլ՝ Հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 16.09.2026թ. ժամը 12:00-17:00				
12:20-12:40	Տրվում են միջանկյալներ թիվ 4,5,6	Իրավիճակը ըստ թիվ 4,5,6 միջանկյալների:	Իրականացնում են միջոցառումներ ըստ միջանկյալների	
12:00-16:00	Հրդեհաշիջման աշխատանքների իրականացում:	Հրդեհը ընդգրկել է մոտ 10 հա տարածք և 5-6 մ/վ քամու ազդեցությամբ արագ տարածվում է: Հրդեհը և առաջացած ծուխը սպառնում է Նորատուս բնակավայրին:	Գավառի ՀՓՋ ուժերով կազմակերպվում է հրդեհաշիջման նախնական աշխատանքները, այնուհետ նրանց են միանում ծառայողներ Մարտունու, Ճամբարակի, Վարդենիսի և Սևանի ՀՓՋ-ներից: Հրդեհի ճակատը բաժանվում է տեղամասերի, նշանակվում են պատասխանատուներ: Գեղարքունիքի ՄՓՎ և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ ստեղծվում է խումբ նոր ջրաղբյուրներ հայտնաբերելու և Սևանա լճից հրդեհաշիջման	Հաստատում է հակահրդեհային անջրպետի ստեղծման կարգը և տարածքը: Հետևում է աշխատանքների իրականացման ընթացքին:

			համար ջուր վերցնելու նպատակով կառամատույցների կառուցման համար: Հաշվի առնելով հրդեհի տարածման ուղղություններն, արագությունը և տեղանքի ռելիեֆը կատարվում է հակահրդեհային անջրպետի ստեղծման տարածքի ընտրություն և դրա համար անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկ: Գեղարքունիքի մարզի հիդրոօդերևութաբանական ծառայությունը պարբերաբար ներկայացնում է տվյալներ եղանակային պայմանների և սպասվող փոփոխությունների վերաբերյալ: Հրդեհի մարումից հետո կազմակերպվում են դիտակետերի ծավալման աշխատանքներ՝ նոր բռնկումների նկատմամբ հսկողության սահմանման համար:	
13:00-14:00	Ընդմիջում			
14:20-15:20	Տրվում են միջանկյալներ 7,8,9,10, 11,12,13	Իրավիճակը ըստ թիվ 7, 8,9,10,11,12 միջանկյալների	Իրականացնում են միջոցառումներ ըստ իջանկյալի	
14:00-16:00	Ծխապատվող տարածքներից բնակչության տարահանման կազմակերպում	Հրդեհը և առաջացած ծուխը սպառնում է անտառային տարածքում տեղադրված մեղվաընտանիքներին և Նորատուս բնակավայրին	Կազմակերպվում է անտառում տեղադրված մեղվապահական տնտեսությունների և Նորատուս բնակավայրի ծխապատման վտանգի գոտում հայտնված բնակչության կարճաժամկետ տարահանումը և կատարվում է տարահանման համար անհրաժեշտ ուժերի, տեխնիկաների և նյութական միջոցների հաշվարկ:	Հետևում է աշխատանքների իրականացմանը
14:00-16:00	Հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավվածների նյութատեխնիկական միջոցներով, սննդով և հանգստի պայմաններով ապահովման	Իրավիճակը նույնն է	Կատարվում են ներգրավված ուժերի և տեխնիկաների համար անհրաժեշտ սնունդի, հանգստի պայմանների, վառելիքաքսուկային նյութերի և նյութատեխնիկական միջոցների ապահովման հաշվարկները և ներկայացնում են այդ աշխատանքների կազմակերպման կարգը:	Հետևում է աշխատանքների իրականացմանը

	կազմակերպում:			
16:00-17:00	Ուումնավարժության արդյունքների ամփոփում		ՈՒսումնավարժության մասնակիցները զեկուցում են իրականացված միջոցառումների մասին:	Անցկացնում է ուսումնա-վարժության արդյունքների հակիրճ ամփոփում, մատնա-նշում ուժեղ և թույլ կողմերը ու տալիս գնահատական:
17:00	ՈՒսումնավար ժության ավարտ			Հայտարարում է ուսումնավարժության ավարտ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2026-09-15 18:00:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ

Հավելված 5
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի սեպտեմբերի 15-ի N 5574-Ա որոշման

ՊԼԱՆ

ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝
«Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ 2026թ. սեպտեմբերի 16-ին ժամը 08:00-17:00

ՀԱՍՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ	ՄԻՋԱՆԿՅԱԼԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՈՒՄ Է ՏՐՎՈՒՄ	ՈՒՄ ԿՈՂՄԻՑ Է ՏՐՎՈՒՄ
1	2	3	4
1-ին փուլ՝ Հրդեհի տեղամասերի հետախուզության կազմակերպում: ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 16.09.2026թ. ժամը 08:00–12:00			
10:00	Միջանկյալ 1 Հրդեհաշիջման աշխատանքներին աջակցելու համար անհրաժեշտ է <Սևան ազգային պարկ> ՊՈԱԿ-ից ներգրավել 50 մարդ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	Միջնորդ, առձեռն
10:20	Միջանկյալ 2 Հրդեհաշիջման աշխատանքներին աջակցելու համար անհրաժեշտ է համայնքի կազմավորումներից ներգրավել 60 մարդ և 1 վարող տրակտոր	Գավառի համայնքապետարան	Միջնորդ, առձեռն
10:30	Միջանկյալ 3 Հրդեհաշիջման աշխատանքներին աջակցելու համար, անհրաժեշտ է համայնքի կազմավորումներից ներգրավել 80 մարդ և 2 վարող տրակտոր	Գավառի համայնքապետարան	Միջնորդ, առձեռն
2-րդ փուլ՝ Հրդեհաշիջման և բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում: ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 16.09.2026թ. ժամը 12:00-17:00			
12:20	Միջանկյալ 4 Հրշեջ ավտոբաքերին ջուր մատակարարելու համար անհրաժեշտ են ջրատար մեքենան.	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն	Միջնորդ, առձեռն
12:30	Միջանկյալ 5 Անհրաժեշտ է շարժական լիցքավորող կայանների միջոցով բենզին և դիզ. վառելիք մատակարարել հրդեհաշիջմանը ներգրաված 32 միավոր տեխնիկայի համար	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչություն	Միջնորդ, առձեռն

12:40	<u>Միջանկյալ 6</u> Անհրաժեշտ է կառուցել երկու ժամանակավոր կառամատույցներ Սևանա լճից ջուր վերցնելու հնարավորություն ստեղծելու նպատակով	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն	Միջնորդ, առձեռն
14:20	<u>Միջանկյալ 7</u> Անհրաժեշտ է ստեղծել հակահրդեհային անջրպետ հրդեհի տարածման ուղղությամբ 120մ երկարությամբ և 10մ լայնությամբ ծառահատումների և հողաշերտի վարելու եղանակով	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	Միջնորդ, առձեռն
14:40	<u>Միջանկյալ 8</u> Հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավված 10 հրշեջ և 2 անտառապահ հայտնվելով կրակի շրջափակման մեջ ստացել են ծանր այրվածքներ և շնչառական օրգանների վնասվածքներ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն	Միջնորդ, առձեռն
14:50	<u>Միջանկյալ 9</u> Քամին ծուխը բերում է Նորատուս բնակավայրի ուղղությամբ, բնակչության համար ստեղծելով ծխահարման վտանգ, դժվարություններ: Քամին մեղմանալու դեպքում ծուխը կխտանա և կառաջանա բնակչության տարահանման անհրաժեշտություն	Տարահանման հանձնաժողով	Միջնորդ, առձեռն
15:00	<u>Միջանկյալ 10</u> Վտանգավոր գոտում հայտնված անտառային տարածքներում տեղադրված են մոտ 35 մեղվաընտանիք:	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն	Միջնորդ, առձեռն
15:00	<u>Միջանկյալ 11</u> Անհրաժեշտ է սննդով ապահովել հրդեհաշիջմանը ներգրաված ուժերին՝ մոտ 320 մարդ ընդհանուր քանակությամբ	Ֆինանսական վարչություն	Միջնորդ, առձեռն
15:10	<u>Միջանկյալ 12</u> Հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավված ուժերի հանգստացող հերթափոխի համար հանգստի պայմանների ստեղծում	Ֆինանսական վարչություն	Միջնորդ, առձեռն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ
7702860120

2026-09-15 18:01:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ՄԱՐԻՆԵ ԳՅԱՐԶՈՅԱՆ